«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հաստատություն՝ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Տաթևիկ Մանուկյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....3
1.1 Հայրենասիրությունը որպես հայրենիքի ճանաչման և ընկալման հիմք.....5
1. 2 Հայրենաճանաչություն և հայրենասիրական դաստիրականությունը անհրաժեշտությունը .9
1.3 Սանի մեջ հայրենաճանաչողության ձևավորումը պատմության փոխանցման միջոցով.....10
2. Պարապմունքի սեփական փորձ.....14
Եզրակացություն.....17
Օգտագործված գրականության ցանկ.....18

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Մեր երկրում երեխաների հայրեճանաչողության համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սաների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է հայրենիքի ընկալման արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա մանկապարտեզը:

Հայրենիքի ճանաչողության մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը երեխաների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները երեխաների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սաների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի մանկապարտեզը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից կրթության կարևորագույն առաքելություն-ներից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

<u>Թեմայի նպատակը և խնդիրները:</u> Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել երեխաների հայրենաչանաճողության ձևավորման կարևորությունը: Աշխատանքի նպատակից ելնելով առաջ եմ քաշել հետևյալ ***<u>խնդիրները</u>*** ՝

- Ներկայացնել հայրենասիրությունը որպես հայրենիքի ճանաչման և ընկալման հիմք,
- Ուսումնասիրել թե ինչպես է կազմակերպվում դաստիարակի համագործակցությունը երեխաների ծնողների հետ:

1.1 Հայրենասիրությունը որպես հայրենիքի ճանաչման և ընկալման հիմք

«Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության» [5]: Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ[1]: Ազգերի կազմավորման ու ազգային պետությունների ստեղծման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության բաղադրիչ մաս XVIII դարում:

Այլ անձանց վերագրելով հայրենասիրական զգացմունքներ, իսկ որոշ իրադարձությունների տալով հայրենասիրական նրբերանգ՝ բնութագրող անձը դրանով հաճախ տալիս է դրական գնահատական: Այն հակադրելի է ունիվերսալիզմից առաջ եկած աշխարհաքաղաքացիության հոսանքին, որը ենթադրում է համամարդկային շահի գերակայում նեղ ազգային կամ էթնիկ շահից[2]:

Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց մոտ տարբեր են: Այդ պատճառով էլ ոմանք իրենց համարում են հայրենասեր, մյուսները՝ ոչ:

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-

---

[1] Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Առաքելյան Մ., Խաչատրյան Հ., Վարելլա Գ. «Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր. ձեռնարկ մանկավարժների համար»: Երևան: «Տիգրան Մեծ»: 2005, էջ 41:

[2] Կրուտեցկի Վ. Ա. Մանկավարժական հոգեբանության հիմունքներ: Երևան: «Լույս»: 1976: 443 էջ:

մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով[3]:

Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազ ազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների:

Առաջին ուղղության մեջ կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողությունները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշվում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղությունը հիմնվում է հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, ներառվում է նաև գործնական տեսանկյուն. հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակվում հայրենիքի հանդեպ սոսկ սիրո խորությամբ ու վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղությունը հայրենասիրությունը դիտարկում է որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ: Խորհրդային հասարակական համակարգի պայմաններում հայրենասիրությունը գաղափարախոսական կարևորագույն հիմքերից մեկն էր, հանդես էր գալիս աճող սերնդի դաստիարակության առանցքային ուղղությունների շարքում:

Չորրորդ ուղղությունը բնութագրվում է նրանով, որ հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը: Այն անվանում են «պետական հայրենասիրություն»: Հայրենասիրության այդ տարատեսակի ի հայտ գալը պայմանավորված էր պատմական առանձնահատուկ պայմաններով: Այն առաջացավ՝ կապված պետության, վերջինիս

[3] «Հայրենասիրություն»: Բրոքհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարան: 86 հատոր (82 հատոր և 4 լրացուցիչ հատորներ): Սանկտ Պետերբուրգ: 1890–1907:

ամրապնդման համար պետական իշխանության տարբեր ձևերի ստեղծման ջանքերի համախմբման անհրաժեշտության հետ:

Հինգերորդ ուղղությունը բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին, որը նրա համար բարձրագույն արժեք է: Տվյալ ուղղությունը կոչվում է նաև անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղությունը որպես հայրենասիրուրյան սուբյեկտ շատ հաճախ դիտարկում է անձին: Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր մակարդակ է, քանի որ անձի հոգևոր ինքնադրսևորումը ենթադրում է կարևորագույն կողմերի և որակների մի ամբողջության դրսևորում, որոնք բնութագրվում են իրենց ձևակերպվածության լիարժեքությամբ, ամբողջությամբ, կատարելությամբ: Անձի այդ որակները ենթադրում են կրոնական բովանդակություն, ինչը հնարավորություն է տալիս այդ ուղղությունն անվանել հոգևոր-կրոնական: Հոգևոր-կրոնական հայրենասիրությունն ունի ամենամեծ և ամենահարուստ ավանդույթը, խոր և հզոր արմատներ:

Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է որպես զգացմունք, որն ավելի ու ավելի է սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով: Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրիչ[4]:

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

---

[4] Բրության Վ, Հայրենասիրությունը որպես ազգային գաղափարախոսություն, Երև. 2011, էջ 4:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

1. 2 Հայրենաճանաչություն և հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը

Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Այն ընդունակ է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերի նկատմամբ և վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն և բարգավաճ:

Հայտնի մանկավարժ Յ.Կոմենսկին գտնում էր, որ հայրենասիրական դաստիարակության կարևորագույն խնդիրներից է մարդկանց օգնելու ձգտում սերմանելը: Իր «Մեծ դիդակտիկայում» նա գրում է. «Միայն այն ժամանակ երջանիկ օրեր կգան մեզ համար, եթե բոլորը գործեն հօգուտ համընդհանուր բարօրության» [5] : Հայրենասիրական դաստիարակության հետազոտություններում առանձնահատուկ նշանակություն ունեն Վ. Սուխոմլինսկու աշխատանքները: Նա, ընդգծելով ոլորտի դժվարությունները, գտնում էր, որ «հայրենիքի նկատմամբ սերը կամքի ուժի է վերածվում այն ժամանակ, երբ մարդու գիտակցության մեջ ամրապնդվում են հայրենի վայրերի և լեզվի հետ կապված կերպարներ, երբ առաջանում է հպարտության զգացում, որ այս ամենը քո երկիրն է»[6]: Հիշենք նաև հայ ժողովրդի մեծանուն զավակ Գարեգին Նժդեհի խոսքերը. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ , կործանվում դրա պակասի պատճառով»[7]:

Հայրենասիրությունը դրսևորվում է տվյալ երկրում ապրող ժողովրդի նկատմամբ սիրով: Երբ ասում ենք հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրի համար հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց և մայրենի լեզվից: Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված օրենքները, դաստիարակել դրանց

---

[5] Կոմենսկի Յան Ամոս, Մեծ դիդակտիկա, Եր., , 2010թ., էջ 115:
[6] Սուխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կոլեկտիվ դաստիարակության մեթոդիկա, Եր., Լույս, 1986թ., էջ 127:
[7] Գարեգին Նժդեհի հայրենասիրական ասույթներից:

ենթարկվելու ունակություն, հարգել սահմանված կարգ ու կանոնը, ունենալ գիտակցական կարգապահություն, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտության ու տեխնիկայի զարգացմանը, ժողովրդին պաշտպանել թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում կյանքը չխնայել հայրենի երկրի համար, քաղաքացու մեջ ձևավորել հպարտության զգացում սեփական երկրի, հարգանք՝ նրա անցյալի նկատմամբ: «Ապրել ու մեռնել հայրենիքի համար, ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից»,- ահա թե ինչպես էր պատկերացնում հայրենասիրությունը հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը[8]:

Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան, ինչպես նաև ապագան:

Ցավով պետք է նշել, որ այսօր հայրենասիրական դաստիարակության ամբողջական արդյունավետ գործընթաց գրեթե չի իրականացվում, որի կարևոր պատճառներից մեկն այս ոլորտում ազգային գաղափարախոսության բացակայությունն է: Այդ ամենի հետևանքով առկա է հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ արդի մեթոդական գրականության պակաս:

Այսօր, ինչպես երբևէ, կարևոր է ուսուցման և դաստիարակության միջոցների և մեթոդների ընտրությունը: Կարևոր է, որ այդ գործընթացն ուղեկցվի երիտասարդ սերնդին հարազատ երկրի ու ժողովրդի պատմական, աշխատանքային, պաշտպանական, մշակութային և հոգևոր աշխարհի արժեքների հետ կապող անմիջական շփումներով: Այս պարագայում մեծ է մշակութային կենտրոնների, այդ թվում նաև պատմությունների դերը ու պատմության փոխանցման միջոցով նրանց դաստիարակումը:

1.3 Սանի մեջ հայրենաճանաչողության ձևավորումը պատմության փոխանցման միջոցով

Երեխայի սրժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, մանկապարտեզն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը:

[8] http://forum.armedu.am/showthread.php/854- Հայ դասականների մտքի գանձարանից:

Դաստիարակի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Դաստիարակի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»[9]: Սանի հայրեճանաչողության խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ դաստիարակը համագործակցային հարաբերությունների միջոցով երեխաների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն[10]:

Պատմության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սանի մարդկության պատմական ուղու, նրա սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, կոնկրետ ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, երեխաների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, երեխաների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ դաստիարակի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ հայրենաճանաչողության ձևավորումը ժամանակակից մանկապարտեզի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում[11]:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել երեխաների ն ազգային արժեքներով:

---

[9] Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”,1980, էջ 132:
[10] Կիրակոսյան Գ.Հ., Դասավանդման մեթոդիկա, Եր. 2015, էջ 56:
[11] Դոլուխանյան Ա., Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 63-66:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ՝

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրություն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները,

- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները,
- սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ,
- ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ,
- զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ,

- զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր ր հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում ր այլն)[12]:

2. Պարապմունքի սեփական փորձ

Թեման՝

«Դրոշը որպես հայրենիք»

Պարապմունքի նպատակը՝

- ✓ իմանալ,
- ✓ ճանաչել,
- ✓ Ծանոթացնել և իրազեկել հայրենիքի, ՀՀ դրոշի, զինանշանի, օրհներգի մասին:

Վերջնարդյունք

- ✓ կարողանալ՝ թվել գույները, տարբերել Հայաստանի դրոշը մյուս երկրների դրոշներից,
- ✓ Զարգացնել երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը, մտքերի փոխանակումը:

Անհրաժեշտ պարագաներ՝

- Դրոշակ, գույներ, քարտեզ, զինանշան,
- Հայաստանի մասին ընդհանուր նկարագրություն,
- Օրհներգ(ձայնագրություն, տպած):

Պարապմունքի ընթացքը

Մուտք - կազմակերպչական մաս

Առավոտյան հանդիպում - երեխաներ երբ դուք առավոտյան եկել եք մանկապարտեզ ճանապարհին տեսե՞լ եք դրոշակ: Ի՞նչ գույներ ուներ դրոշը: Երեխաներին տրվում է դրոշը նկարելու առաջադրանք:

Խթանում:

Դաստիարակը հարցեր է տալիս սաներին՝ կիրառելով մտագրոհ մեթոդը դրոշ բառի շուրջ: Հարցերի միջոցով նախապատրաստում է իմաստի ընկալմանը:

[12] Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 14

Իմաստի ընկալում:

Սաները նախապես նստած են շրջանաձև: Յուրաքանչյուրն ունի իր ձեռքով պատրաստած դրոշ, որի միջոցով ներկայացնում է իր պատկերացումները:

Կշռադատում

Այս փուլում դաստիարակը հանձնարարում է խմբերին գնահատել միմյանց մեկնաբանություններով և վերլուծությամբ՝ շեշտը դնելով՝ «ի՞նչն էր ինձ ծանոթ» և «ի՞նչ եմ սովորել հարցերի վրա»:

Քննարկման նյութ:

«Ի՞նչ կանեիք եթե Ձեր ընկերը կեղտոտեր դրոշը».

Հիմնավորել պատասխանը:

Խաղի կազամկերպում՝ Ճանաչիր քոնը:

Գրատախտակին փակցվում են մի քանի երկրների դրոշներ՝ (Ռուսաստան, Վրաստան, Ֆրանսիա, Թուրքիա): Երեխաները պետք է մոտենան և գտնեն Հայաստանի դրոշը:

Դիդակտիկ նյութ- դրոշների նկարներ, քարտեզ, Հայաստանի տեսարժան վայրերի նկարներ, զինվորների նկարներ:

Գնահատում – Սաները խրախուսվեցին:

Եզրակացություն

Այսպիսով, հայրենաճանաչողության ձևավորման և նրա հարաբերական կայունության պահպանման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան: Երեխաներին պետք է ծանոթացնել հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայրենիքի ճանաչման, ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, մտածելակերպ ունեցող, հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով հայրենաճանաչողության ձևավորումը ժամանակակից երեխայի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր երեխա պետք է իմանա, որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի և հայրենաճանաչողության ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, հայրենիքի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հայրենիքի ճանաչման հիմքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայրենասիրություն»: Բրոքհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարան: 86 հատոր (82 հատոր և 4 լրացուցիչ հատորներ): Սանկտ Պետերբուրգ: 1890–1907թթ.:
2. http://forum.armedu.am/showthread.php/854- Հայ դասականների մտքի գանձարանից:
3. Բրության Վ, այրենասիրությունը որպես ազգային գաղափարախոսություն, Երև. 2011թ.:
4. Գարեգին Նժդեհի հայրենասիրական ասույթներից:
5. Դոլուխանյան Ա., Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006:
6. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Առաքելյան Մ., Խաչատրյան Հ., Վարելլա Գ. «Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր. ձեռնարկ մանկավարժների համար»: Երևան: «Տիգրան Մեծ»: 2005թ.
7. Կիրակոսյան Գ.Հ., Դասավանդման մեթոդիկա, Երև. 2015թ.
8. Կոմենսկի Յան Ամոս, Մեծ դիդակտիկա, Եր., 2010թ.
9. Կրուտեցկի Վ. Ա. Մանկավարժական հոգեբանության հիմունքներ: Երևան: «Լույս»: 1976թ.
10. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ
11. Սուխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կոլեկտիվ դաստիարակության մեթոդիկա, Եր., Լույս, 1986թ.
12. Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”,1980թ.